ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ (1452 – 1519 թթ.)

Լեոնարդո դա Վինչին վերածննդի դարաշրջանի հռչակավոր նկարիչ էր, քանդակագործ ու ճարտարապետ: Նա սերունդներին թողել է ավելի քան 7 հազար ձեռագիր էջեր, որոնք լի են զարմանահրաշ սարքերի, գործիքների, մեքենաների, ճարտարագիտական կառույցների գծագրերով և նախագծերով:

Անդրադառնալով մեքենաներում շփման փոքրացման որոշակի խնդիրների՝ Լեոնարդոն ուշադրություն է դարձրել շփվող հանգույցներում գլորման մարմինների օգտագործմանը: Այս մոտեցումը հնարավորություն է տվել նրան համարելու գնդիկավոր և հոլովակավոր առանցքակալների հայտնագործության հեղինակ:

Իսկական գիտական սենսացիա էր նաև այդ ձեռագրերից մեկում հայտնաբերված մետաղական քսուքհամաձուլվածք պատրաստելու բաղադրատոմսը (3 մաս պղինձ և 7 մաս անագ): Բանն այն է, որ գրեթե նույն բաղադրությամբ առաջին դյուրահալ քսուքհամաձուլվածքը 1839 թ. արտոնագրել է Այզեկ Բաբիտը՝ Լեոնարդո դա Վինչիից շուրջ 300 տարի անց: Այդ համաձուլվածքը, որը կոչվում է բաբիտ, լայնորեն օգտագործվում է տարբեր մեքենաների առանցքակալներում: